


486

ԵՐԿՐՈՐԳ
Գ Ի Ր Բ
ՄԱՆԿԱՆՆ



ՄԻՐՈՒՆ
ԶՐՈՄԱՐԱՆ

Ull



ՆՈՐ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԿԱՄ

ՍԻՐՈՒՆ ԶԻՑՍԱՐԱՆ

ՄԱՆԿԱՆՑ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԲԸ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Մանկական երգեր, կարն հասուածներ,
առակներ, առածներ եւ փոքր
պատմութիւններ :

Տ Է Ր Ե Ի Չ Ր Ա Ս Ա Ր Ա Կ Ի Չ

ԳՐԱՎԱՃԱՌ Վ. Յ. ՄԱՐԿԱՐԻԱՆ

Է. Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ارمنى مکتبلرنده تدريس اولنق اوزره معارف نظارت جلیله سنک طبع و نشر
ایتمش اولدینی فهرستنده مندرج اولمشدر و معارف نظارت جلیله سنک
رخصتنامه سیله طبع اولمشدر



Կ. ՊՈԼԻՍ

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն. Ճ. ԱՐԱՄԵԱՆ

1894



Ը Ն Ծ Ա Յ



ՈՂԲԱՅԵԱԼ ՀՕՐԵՂԲՕՐՍ ॥

ՄԻՔԱՅԷԼ ԱՌԱՆՁԱՐ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

ՍԻՐԱՍՈՒՆ ԶԱԻԱԿԱՑ

ՍԱՐՍԷՆԻ, ԱԼՊՐԻԿԻ, ԱՇԽԷՆԻ,

ԱՍՏՂԻԿԻ ԵՒ ԱՐՏԱԻԱԶԳԻ

ԻՈՐ Ի ԹԷՅՐԱՆ ԽԱՐՍԿԱՍՏԱՆԻ

Վ. Յ. Մ.

Ընթերցանութիւնը՝ մանկանց դիրին, սիրելի,
գրօսալի, հրահանգիչ ընելու դրութիւնը եւ ժամա-
նակին հետ բարեփոխելու պէտքը մեր ուրը գրաւե-
լով՝ ներկայս հրատարակելու ձեռնարկեցինք :

Յուսանք որ մանկավարժ եւ դաստիարակի ի-
րենց օժանդակ պիտի ունենան զայս՝ իւրեանց խնա-
մոցն յանձնուած մասաղ մանկանց միտքը մշակելու
եւ սիրքը կրթելու, ընդարձակելով ի հարկին ըն-
թերցարանիս կրթական, խրատական եւ գիտական
մասերը :

Վ Ա Հ Ր Ա Մ



Գիւղացի աղջիկը ինք կեր կուտար հաւերուն եւ սան
գործերը կատարելի վերջ, գիրքը կառնէր և կարդար :


Ով որ ընթերցումը կը սիրէ ժամանակէկը գտնէ կարգալու :



ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Կ Ա Մ

Սիրուն Զբօսարան



ԴՊՐՈՑԸ ԻՆՉ ԿԸՆԵՆ

Յա կո բին հայ ըը ի բեն ը սաւ-
տը ղաս, ըզ քեզ եզ բօ ըըդ հետ
դպ ըոց պի տի ղր կեմ :

Դպ ըո ցը պի տի մը նաք մին չև
ե բե կոյ և ա պա մի ա սին տուն
պի տի դառ նաք :

Յա կոբ ու ըա խա ցաւ, բայց իւր
եզ բօր մէն ու զեց տե ղե կա նալ թէ-
դպ ըո ցը ի՞նչ կը նեն :

Երբ Ար սէն տուն դար ձաւ,
Յա կոբ ա նոր ձեռքէն բրու նե լով
հար ցուց.

— Եղբայր, դպրոցը ի՞նչ կը նէք:



Ար սէն պա տաս խա նեց, ա մէն
ա ուա ւօտ դպրոցը կը տես նեմ շատ
տըղաք ներ, որ երբ դաս տի ա բա կը
տես նե՛ն, կը բա բե ւե՛ն և տե դեր նին
կը նրս տին. ես ալ ա նոնց պէս կը
բա բե ւեմ դաս տի ա բա կըս և իմ
տե դըս կը նրս տիմ:

Յե տոյ ա դօժք կը նեմք և քիչ մը
վեր ջը դաս առ նել կըս կը սիմք:

Դպրոցին մէջ կը սով ըինք
կար դալ, գը բել և հա շուել:

Եր բե մըն կ'եր գեմք ու պատ կեր
կը գը ծեմք :

Դպ ըո ցին մէջ օրը եր կու. ան գամ
կըզ բօս նումք և զա նա գան խա ղե ըով
կըզ բա ղիմք :

Խա ղե ըը դաս տի ա ըա կը կորօ շէ :



Չան գա կը խա ղի, դա սի
ժա մե ըը մեզ կի մա ցը նե

Ով որ դասե ըը լաւ պատ
րաս տէ և դաս տի ա ըա կին
հը բա ման նե ըը լաւ կա տա ըէ
ա մե նուն սի ըե լի կը լի նի եւ
պա տիւ կըս տա նայ :

Յա կոբ իր եղ բօ ըը ը սաճ նե ըըն
ու շադ բու թեամք մը տիկ ը նե լէ
վեըջ ոտ քի վը բայ ե լաւ ու ը սաւ .

— Եղ բայր, ես ալ վա ղը քե զի
հետ դպ ըոց պի տի գամ, ես ալ
կար դալ կու զեմ սով ըիլ, որով հե տեւ
հայ ըի կըս ը սաւ թէ՛ կար դա լը շատ
լաւ բան է :

— Լաւ ու ըն ճըն, վա ղը մի ա սին
 եր թամբ դպ ըոց ը սաւ Ար սէն:

Երկ բորդ օ ընն Ար սէն և Յա կոր
 մի ա սին դպ ըոց եր թալ ըս կը սան:

Յա կոր իր խոս տու մը պա հեց և
 կըր թու ելով, իւր հօ ըր և ա մե նուն
 սի ըն լի ե ղաւ Ար սէ նին պէս:



ԿՐԹԵԱԼ ՇՆԻԿ

Տե սայ ես

Մէկ շը նիկ,

Գա ռան պէս

Աղ լո ըրիկ:

Ի՛նչ փայ լուն

մ. չիկ ներ,

Ու պըզ տիկ

Թա թիկ ներ:

Որ չափ ալ
 Կըրթ եալ էր.
 Գի տես, գար
 Չեռք պագ ներ :

Կան չե ցի
 Քո վըս ե կաւ.
 Սի բե ցի,
 Նըս տե ցաւ :

Երբ տե սայ
 Այս չը նիկ.
 Չար մա ցայ,
 Աղ բա՛ր ըիկ :





ՈՐՆ Է ԼԱԻ ՏՂԱՆ

Ո՞րն է լաւ տ զան ,
 Ում պա տիւ կու տան .
 Եւ սի բեն զա նի ,
 Իբ բեւ պի տա նի :

—Այն տ զան մի այն ,
 Որ պար կեչ տու թեան ,
 Պատ կեր մ'է սի բուն ,
 Հա ճոյ ա մե նուն :

Ո՞րն է լաւ տ զան ,
 Ում պա տիւ կու տան .
 Եւ սի բեն զա նի .
 Իբ բեւ պի տա նի :


— Այն տղան մի այն,
 Որ աշխատու թեան
 ժամերն ան դադար,
 Կ'աշխատի յօ ժար:

Ո՞րն է լաւ տղան,
 Ում պատիւ կու տան.
 Եւ սիրեն զանի,
 Իբրեւ պիտա նի:

— Այն տղան մի այն,
 Յետ աշխատու թեան,
 Դաշտ պարտէզ կեր թայ,
 Պարէ կը խայ տայ:

Ո՞րն է լաւ տղան,
 Ում պատիւ կու տան.
 Եւ սիրեն զանի:
 Իբրեւ պիտա նի:

— Այն է լաւ տղան,
 Ում պատիւ կու տան.
 Եւ սիրեն զանի,
 Իբրեւ պիտա նի:





ԱՂՔԱՏՆԵՐ

Սի բուն տը զաս,
 Եր բոր տես նաս
 Խեղճ աղքատ ներ,
 Աչք մի գոցեր:

Պէտք է գիտ նալ,
 Թէ թըշ ուսուք ալ
 Մեր եղբարք են,
 Մեզ կարօտ են:

Հա գուստ ու տեստ,
 Խեղճին պա հեստ,
 Անօ թի ին՝
 Տնւր հա ցա գին:

Ով որ խեղ ճեր
 Միշտ խը նա մէ,
 Հան գիտտ օրեր
 Ա՛յն կան ցու նէ:

Տո՛ւր հինգ փա ըայ,
 Աս տուած կու տայ
 Քեզ հինգ հա ըիւր,
 Օր մի ալ բիւր:

Ով որ խեղ ճեր
 Միշտ վը ռըն տեր,
 Պա տառ մը հաց
 Ալ չէ գը տած:

Ար քա յու թեան
 Դու ռըն ան գամ,
 Ա նո զոր մի
 Ա ռաջ գոց ուի:

Գը նա տես նեւ
 Այն ար ցունք ներ,
 Որ ըկը վա զեն
 խեղ ճին աչքէն:

Ո ՂՐԻ ՎԵ ԳԱՐ ,
 ԼԸ ՍԷ ՃԱՅ ՆՐՆ ԱԼ .
 ՔԵԳ ԿԵԱՆՔ ՄԱՂ ԹԵԳ ,
 ԱՍՏ ՈՒՆԻ ԼԸ ՍԵԳ :

ՄԻ ՐՈՒՆ տ ՂԱՅ ,
 ՈՎ ՈՐ ԸԼՄՅ՝
 ԹԷ աղ քատ է ,
 Ա ՆՈՐ օգ նէ :



Պ Ա Ր Տ Է Ձ

ՄԵՆՔ պար տեղ մը ու նիմք ,
 Հոն կայ պէս պէս ծաղիկ .
 Վար դըն է գեղեցիկ ,
 Այն ինչ հոտ ա նու շիկ :

Պտ դա տու շատ ծառեր,
 Հայրըս ինքըն է տնկեր.
 Որք գար նան մէջ ծաղկին,
 Պը տուղ տան ա մառին:

Վարդի պէս կար մրցած,
 Նուռ, խնձոր ու կեռաս.
 Ամենուն համն ա նուշ,
 Մոռցանք տանձ, սալոր, նուշ:

Կիրակի մը այգի,
 Հօրըս ըսի զիս տանի,
 Երբ հասնին խաղողներ,
 Այն հարուստ ողկոյզներ:

Հայրըս ինձի ըսաւ թէ,
 Կարդալը լաւ սովորէ.
 Որօգնես միշտ ինձի,
 Այս է պարտք որդեկի:

Ս. մեն օր խնջօք եմ,
 Համարըս լաւ սեր տեմ.
 Կ'աշխատիմ ու գըրեմ,
 Կեանքըն այս է լաւ գիտեմ:



Տ Ո Ւ Ն

Մեր տու նը նոր և գեղեցիկ է :
 Հայրըս նոր շինել տու աւ,
 որով նա գիր ներ է կան օգնա կան
 ներ բով եւ հաս տատ պա տեր
 հիւ սե ցին :

Մեր տու նը է բեք յարկ, վեց
 սեն եակ և երկու մեծ սըրահ ունի :
 Երեք սան գուղիս եւ մեկ
 խո հա նոց ու նի, որ մա քուր է :



Կե ըա կու ըի ա ման նե ըը կլա-
յե կու ած են :

Հաւ ան կողին ներ ու վեր մակ ներ
ու նիմք :

Հայ ըրս շու կայ կ'եր թայ և մեր
ու տես տը կը հո գայ :


Մայ ըրս ալ տան գոր ծե ըը կը
կար գա դրե :

Իսկ մենք երբ տուն կ'եր թամք,
կ'ու տեմք կը խը մենք և հան գիտտ կը
քը նա նամք :

Հայ ըրս ու մայ ըրս ու բախ կը լի-
նին՝ երբ մենք ի բենց խօս քը մը տիկ
կ'ը նեմք :

Մայ ըի կըս ը սաւ որ դուք եր-
ջա նիկ էք, աղ քատ նե ըը յի շե ցէք
եւ ա նոնց օգ նե ցէք :

Ես իմ մօ ըրս խօսքը մը տիկ
ը ըի և աղ քատ ներ ուն հաց տը ու ի
եղ բայ ըրս ալ կա բօտ նե բուն
թուղթ ու գը ըիչ տու ալ :



Կե բա կու ըի ա ման նե ըը կլա-
յե կուած են :

Լաւ ան կողիններ ու վեր մակներ
ու նիմք :

Հայ ըրս շու կայ կ'եր թայ և մեր
ու տես տը կը հո գայ :


Մայ ըրս ալ տան գոր ծե ըը կը
կար գա դրէ :

Իսկ մենք երբ տուն կ'եր թամք,
կ'ու տեմք կը խը մենք և հան գիստ կը
քը նա նամք :

Հայ ըրս ու մայ ըրս ու բախ կը լի-
նին՝ երբ մենք ի բենց խօսքը մը տիկ
կ'ը նեմք :

Մայ ըի կըս ը սաւ որ դուք եր-
ջա նիկ էք, աղքատ նե ըը յի շե ցէք
եւ ա նոնց օգ նե ցէք :

Ես իմ մօ ըրս խօսքը մը տիկ
ը ըի և աղքատ ներ ուն հաց տը ուի
եղ բայ ըրս ալ կա բօտ նե բուն
թուղթ ու գը ըիչ տու աւ :





ԵՐԳ ՓՈՔՐԻԿ ԵՐԱԺՇՏԱՅ

Օն, եղ բարբ, առ նեմբ

Նը ուա գա բան նիս.

Կար գաւ մենք զար նեմբ,

Սի բուն եր գեր նիս :

Եկ էք, եր գենք, սի բուն եր գեր նիս:

Եկ էք, եր գենք, սի բուն եր գեր նիս:



Թըմ բուկ մը ու նիմբ,

Շատ գե ղե ցիկ է.

Քա նի կը զար նեմք ,
 Նա ձայն կը հա նէ :
 Թըմ, Թըմ, Թըմ, Թըմ, նա ձայն կը հա նէ :
 Թըմ, Թըմ, Թըմ, Թըմ, նա ձայն կը հա նէ :



Փոք բիկ ջու Թակ նիս ,
 Շատ լաւ լա բաժ ենք .
 Առ նեմք ա զեղ նիս ,
 Եր գեմք ու ա ծե նք :
 Պի, պի, պի, պի , եր գեմք ու ա ծե նք :
 Պի, պի, պի, պի , եր գեմք ու ա ծե նք :



Մեր սի բուն տաւ իղ ,
 Չե նք մոռ նար քե զի .
 Թող լինի շաւ իղ ,
 Չայ նի կըդ մե զի :
 Տի, տի, տի, տի , ձայ նի կըդ մե զի :
 Տի, տի, տի, տի , ձայ նի կըդ մե զի :



Տե սէք մեր սը ըինք,


Հա մըր չը մը նար .

Մեհք զա նի առ ինք,

Սու լե լու համար :

Տիւ, տիւ, տիւ, տիւ, սու լե լու հա մար :

Տիւ, տիւ, տիւ, տիւ, սու լե լու հա մար :



Ծնծ զայն ցըն ծա լով

Կ'առ նեմք ձեռ բեր նիս,

Ու ժով զար նե լով

Կեր գեմք ա մեհք նիս :

Ծին, ծին, ծին, ծին, կ'եր գեհք ա մեհք նիս :

Ծին, ծին, ծին, ծին, կ'եր գեհք ա մեհք նիս :



Փողեր նուս գող ձայն
 Մեզ քաջալեր է.
 Ով որ սիրէ զայն,
 Թող լաւ մը լըսէ:
 Թըռու, Թըռու, Թող լաւ մը լըսէ:
 Թըռու, Թըռու, Թող լաւ մը լըսէ:



Եկ էք եղբայրներ,
 Դաշնա կիւն վըրայ,
 Շարժենք մեր մատներ:
 Թող լաւ մը գողայ:
 Տօ, Ֆա, ըէ, սի, Թող լաւ մը գողայ:
 Տօ, Ֆա, ըէ, սի, Թող լաւ մը գողայ:





Բ Ա Ր Ի Տ Ղ Ա Յ Ն

Բա րի տը ղայն ա մեն ա ու ա ւ օտ
 և ե րե կոյ ծու ն կի վը րայ գա լով
 կը սե ր հե տե ւ եալ ա ղ թ քը :

Հա՛յր մեր որ յեր կի նըս ես,
 Սուրբ ե ղի ցի ա նուն քո,
 Ե կես ցէ ար քա յու թիւն քո,
 Ե ղի ցին կամք քո,
 Որ պէս յեր կի նըս և յերկ րի :
 Զհաց մեր հա նա պա զորդ
 Տուր մեզ այս օր :
 Եւ թող մեզ ըզ պար տիս մեր,
 Որ պէս եւ մեք թո ղու մք մե րոց
 պար տա պա նաց :
 Եւ մի՛ տա նիր
 Ըզ մեզ ի փոր ձու թիւն ,

Այլ փըր կեա՛ ըզ մեզ ի չա րէ :
 Զի քո է ար քա յու թիւն և զօ ղու ,
 թիւն և փառք յա լիտ եա նըս ա մէն :
 Տէր իմ, տուր ինձ ի մաս տու թիւն,
 Հօ րըս , Մօ րըս յա ջո ղու թիւն :

ԱՄԵՆԱՄԵՍ ԱՆԲԱՂԴՈՒԹԻՒՆ

Երբ հո ղա գոր ծը չու նի եզ , ա րօր
 Եր բէք չեմ ա սեր նորա բաղ դա լոր .
 Երբ ապ րանք ու փող չու նի խաչ
 նու թ պան
 Նա ալ է ան բաղդ , թըչ ու առ բաչ
 ւա կան .
 Բայց երբ մեր տը ղան չեր թայ
 վար ժա տուն ,
 — Ա՛յս է ա մե նէն մեծ
 ան բաղ դու թիւն :



Դ Պ Ր Ո Ց

Գառ նիկ իր հօ ըը հար ցուց .
 Հայ ըիկ, կը խնդ ըեմ,
 Ըսէ ինձ, տես նեմ,
 Ինչո՞ւ ա մեն օր
 Եղ բայ ըրս Գրի գոր
 Կա նուխ կեկ կ'ել լայ,
 Եւ ո՞ւր կ'եր թայ նա .
 Ինչո՞ւ մին չե ճաշ
 Տու նը չը գառ նար :

Բա ըի հայրը պա տաս խա նեց .
 Աչ քիա լոյս, եղ բայ ըրդ
 Ա մեն ա ուա ւօտ
 Կա նուխ կեկ գըպ ըոց
 Կը վա գէ կ'եր թայ,
 Եւ մին չեւ ի ճաշ
 Այն տեղ կը մը նայ :
 Հոն կ'եր թան նոյն պէս
 Եւ շատ մա նուկ ներ,
 Նորա ըն կ'եր ներ,
 Նորա հոն կ'եր թան
 Որ կար դալ սով ըին
 Եւ յէ տոյ բա ըի,
 Խե լօք մարդ լի նին :



Բ Ա Ր Ի Տ Ղ Ա Յ Ն

Ա, մեն մարդ տես նեւ կ'ու գէր
Սեգրակի տը ղայն, ա մեն ծը նողք
ի բենց որդ Կոց կ'ը սէ ին.

Տղա՛ բըս, դի տե ցէք Սեգրա կի
տը ղուն քա ղա քա վա բու թիւ նը,
ճնո ղա սի բու թիւ նը և Ե կե ղե,
ցա սի բու թիւ նը:

Տէ սէք, ա մեն մարդ բա ըի տը,
ղայ կը կոչէ Սեգրա կի տը ղայն՝ փո,
խա նակ ա նոր ա նու նը տա լու:

Երբ գուշք ևս ա նոր օրի նա կին
 հե տե լիք, ը սաւ Յով հան նէս իր
 որդ լո ցը, ես ալ ձե զի պի տի ը-
 սեմ աս կից վեր ջը բա ըի Խաչիկ,
 բա ըի Սա հակ, բա ըի Սար գիս . և
 գիտ ցած ե զիք, ով որ բա ըի լի-
 նի, ա մե նուն սի ըե լի կը լինի :

Անց եայ օր բարի տը զուէն հայ ըը,
 Սեդ բակ, պատ մեց թէ՛ իւր որ գին
 ա մեն ա ու աւօտ կա նուխ ան կող նէն
 կ'ել նէ, ձեռ բե ըը, երեսնե ըը, ակ-
 ու ա նե ըը և ա կանջ նե ըը կը լու այ :

Գլու խը կը սանտրէ, թաչ կի նա,
 կով քի թը կը մաքրէ . կը ջա նայ որ
 հա գուստ ները չաղ տո տին և մե-
 լան չը թա վի իւր վը բան : Գիր բե ըն
 ու տետ բակ նե ըն այն պէս մա քուր
 կը պա հէ որ ա մեն մարդ կը զար-
 մա նայ :

Բան մը ե թէ ու զէ մէ կէ մը,
 «Ե թէ կա ըե լի Աէ չը նորհ ը ըէք կամ
 խնդ բեմ տու էք» կ'ը սէ, և ինչ որ
 տան կամ առ նէ «Շն որ հա կալ

եմ, կը պա տաս խա նէ :

Յով հան նէս՝ իւր որդ ւոց բա ըի տը զուն հօ ըը ը սած նե ըը պատ մե լէ վերջ, հար ցուց. խա չիկ, բա ըի տը զայն ձեր գըպ ըո ցը կու գայ. ը սէ՛ տես նեմ, դըպ ըո ցին մէջ ի՞նչ պէս կը կե նայ, դա սե ըն ալ լաւ կը պատ ըաս տէ՞ :




— Հայ ըիկ, պա տաս խա նեց խա չիկ, բա ըի տը զայն ա մեն ա ուայ ւօա դըպ ըոց կու գայ՝ և դա սե, ըուն կ'աշ խա տի, աղ մուկ չը հա ներ, իւր ըն կեր նե ըուն հետ գէշ չը վար ուիր, իւր դա սե ըը լաւ կը

պատ րաս տէ եւ շատ ա զէկ կը
կար դայ: Որ մը ի րեն հար ցու ցինք
Թէ ի՞նչ պատ ճա ուաւ մենք .քե զի
պէս չեմք կա ըող լաւ կար դալ:

— Այս պէս պա տաս խա նեց մեզ
բա ըի տը զայն. « չեմ զի տեր Թէ
դուք ի՞նչ պատ ճա ուաւ չէք կըր նար
ինձ պէս կար դալ. բայց ես սա մի այն
զի տեմ որ, երբ դաս տի ա րա կը
դաս կու տայ, մեծ ու շաղ բու Թեամք
մտ իկ կ'ընեմ, և առած դասս ան մի
ջա պէս կը կար դամ և դա սա տու ին
ը սած նե ըը կը յի չեմ:

Ես և իմ մի քանի ըն կեր նե ըըս
փոր ձով տե սանք որ բա ըի տըղուն
ը սած նե ըը ճիշդ է ին:

Հայ ըը, Սա հա կին դառ նա լով
ը սաւ. դու յե տոյ պի տի պատ,
մես Թէ՛ բա ըի տը զայն ե կե զե
ցին ի՞նչ պէս կը կե նայ:





ՁՈՒԿՆ ՈՒ ԳՈՐՏԸ

Գորտ մը կ'երնէ լճակէն, ցատկելով ցատկելով կ'երթայ կը հասնի ծովեզերքը, հոն կենալով կը նայի, կը տեսնէ որ արծաթի գունով ձուկեր կ'անցնին կը դառնան ծովուն մէջ. « քեզի կ'ըսեմ, կը պոռայ ձուկերէն մէկուն. կեցիր, կեցիր, մէկտեղ ճամբորդութիւն ընեմք. ինչ որ ձեռք ձգեմք, կէսը քեզի կէսը ինձի, ես ալ քեզի պէս ամեն տեսակ լողալու կերպը գիտեմ, ծովն ալ կրնամ չողայ. կեցիր, ես ալ բովի գամ ու մէկտեղ երթամք »:

Բայց ձուկը կ'ըսէ, մի՛ աշխատիր տեղդ կեցիր:



ԱՌԱԿԱԻՈՐ ԳԱՆՔ

Գիրքը մէկ ծառ՝ վրան կեռաս,
 Երբոր ձեռքդ առնուս կարգաս,
 Միայն տերև չը դարձնես,
 Նայէ պտղին համբ առնես:



ԵՐԿՈՒ ՃԱՄԲՈՐԴՆԵՐ

Երկու ճամբորդներ ձիւնէն ցուր
 տէն փախած, կ'երթան պանդոկ մը
 կը մտնեն:

Պանդոկապետն ասոնց համար
 ըսւ կրակ մը կը վառէ, որպէս զի
 տաքնան:

Երկու ճամբորդները տեսնելով
 կրակը, կ'ուրախանան և անոնցմէ մէկը
 կրակին այնչափ կը մօտենայ, որ այրե-
 լուն բան չը մնար, ու կըսկսի պօռալ,
 ա՛յ, այս ինչ կրակ է, քիչ մնաց պիտի
 այրէր զիս:

Իսկ միւս ընկերը չորս հինգ ոտք
հեռուն կեցած, ձեռքերը կ'երկնցնէ
ու կ'երկնցնէ եւ չը կրնար տաքնալ,
ձեռքերն և ոտքերը գրեթէ սառած
կը պօռայ, է՛հ, այս ի՞նչ տեսակ կրակ
է, ձիւնէն աւելի կը սառեցնէ զիս :

Պանդոկապետը կը հասնի, և տես
նելով անոնց վիճակը, խնդալէն ուժը
կը կտրի :

Մէկուն կ'ըսէ. դու քիչ մը հե,
ուու կեցիր որ չայրիս, իսկ միւսին կը
սէ. դու ալ քիչ մը առաջ եկուր որ
չը սառիս :

Կրթեալ տղայք այսպէս չեն վար-
ուիր :





Ք Ա Ղ Ա Ք Մ Ը

Ասիոյ մէջ կար պարսպապահս եւ խիստ ամուր քաղաք մը, զոր շինել տուած էր Շամօ անուն մէկը :

Այս քաղաքին դրանք վրայ խոշոր գրերով ԸՆՏԼ գրել տուած էր, եւ օրէնք էր որ այս դռնէն ներս ս'վ որ մտնէր, պէտք էր յանձն առնուր ընել ինչ գործ որ իրեն յանձնուէր :

Ամեն մարդ հոն լռիկ մեջիկ մինչև
երեկոյ կ'աշխատէր և հանգիստ կ'ապ-
րէր. ամեն մարդ իւր սրարտքը և գոր-
ծը գիտէր որք որոշուած էին. հոն
ծոյլերը չէին կրնար ապրիլ, և քաղաքը
Թողելով դուրս կ'ելնէին. խօսելը կար-
ծես արգիլուած էր :

Տղայք, ծոյլերէ հեռացէ՛ք, լռիկ
մեջիկ դասերնիդ սորվեցէք :



Ա Ն Ձ Ր Ե Ի

Անձրեւ, անձրեւ, եկ, արի,
Բուսցո՛ւր ցորեն ու գարի,
Բուսցո՛ւր ծաղիկ, կանանչ խոտ,
Աւլէ՛ փոշի, մաքրէ՛ օդ :


Անձրեւ, անձրեւ, ե՛կ բարի,
Գալըդ ամենուս բարի :






ԳԱՌՆԻԿ ԵՒ ՄԱՅՐԸ

- Ինչո՞ւ կուլլաս, խեղճ Գառնիկ .
 — Շատ ծեծ կերայ ես, մայրիկ :
 Քեզ ո՞վ ծեծեց, իմ Գառնիկ .
 — Կախարդ պառաւ մէկ կնիկ :
 Ինչո՞ւ ծեծեց քեզ, Գառնիկ .
 — Կայի ծառի տակ, մայրիկ :
 Ինչո՞վ ծեծեց քեզ, Գառնիկ .
 — Մէկ մեծ վայտով, իմ մայրիկ :
 Ո՞ւր տեղիդ զարկաւ, իմ Գառնիկ .
 — Թաթիկներուս, ո՞վ մայրիկ :
 Ի՞նչպէս լացիր դու, Գառնիկ .
 — Մէ՛ մէ՛ մէ՛ մէ՛, իմ մայրիկ :





ԱՐՁԱԳԱՆԳ

Փետրգ դեռ չէր գիտեր թէ ար
 ձագանգն ի՞նչ է: Սր մը դաշտը անտա-
 ուի մը մօտ խաղալու ատեն պօռաց.

Հօ՛, Հօ՛, եւ նոյն բառերը լսեց
 քովի անտառին մէջէն, Հօ՛, Հօ՛.

Փետրգ զարմանալով կրկին պօռաց.
 Հօ՛, Հօ՛. նորէն նոյն ձայնը լսեց. Հօ՛, Հօ՛:

Այս անգամ Փետրգ կարծելով թէ
 քովի անտառին մէջ տղայ մը պահուը-
 տած է, հարցուց.

— Ո՞վ ես .

Անտառին մէջէն իսկոյն նոյն ձայ-
նը լսուեցաւ :

— Ո՞վ ես .

Այն ատեն Գէորգ բարկանալով
կոչեց .

— Խե՛նդ .

Նորէն լսուեցաւ . — Խե՛նդ .

Գո՛ւ ես ,

— Գո՛ւ ես :

Գէ՛շ ես .

— Գէ՛շ ես .

Այսպէս շարունակուեցաւ . ինչ որ
Գէորգ կ'ըսէր , նոյն բանն անտառին
մէջէն կը լսէր :

Վերջապէս արձագանգն յաղթեց ,
որովհետեւ չդադրեցաւ պատասխանելէ :

Գէորգ սաստիկ բարկացած , ըսկը
սաւ անտառին ամեն կողմը վազել եւ
պահուրտած տղայն գտնելու աշխատիլ :

Բայց ամեն կողմ փնտռելէ վերջ
մէկը չը կրցաւ գտնել :

Գէորգ յուզուած , բարկութենէն

աչքերը լեցուած, յոգնութենէն ոտ-
 ժերը ցաւած, տուն գնաց և իր մօրը
 գանգատեցաւ որ անպիտան տղուն մէ-
 կը անտառին մէջ պահուըտեր, իրեն
 նախատական խօսքեր ըսեր էր :

Խելացի մայրն անմիջապէս հասկը-
 նալով որ տղայն խաբուէր է արձագան-
 գէն, ըսաւ անոր .

Տղաս, ինքզինքդ կ'ամբաստանես,
 վասնզի ըսածներդ պարզապէս քու
 խօսքերուդ արձագանգն են : Թէ որ
 անտառին մօտ քաղաքավար խօսքեր ը-
 սէիր, նոյն խօսքերը պիտի լսէիր : Աշ-
 խարհս այսպէս է, տղաս, մենք ուրիշ
 ներուն հետ ինչպէս վարուիմք, անոնք
 եւս մեզ հետ այնպէս կը վարուին :

Տղաքս, բարի ըլլանք, բարիք ընեմք
 որպէս զի ուրիշներէն ալ բարիք կարե-
 նանք ըսպասել :





ԹԻԹԵՌՆ ԵՒ ՄԱՆՈՒԿՆ

Մ Ա Ն Ո Ւ Կ Ն

Ըսէ՛ ինձի ի՞նչ բանով
 Կ'ապրիս թիթեռդ իմ սիրուն,
 Ամբողջ օրդ խաղերով
 Կ'անցունես, չզգաս յոգնութիւն :

Թ Ի Թ Ե Ռ Ն

Սիրուն կանանչ խոտին մէջ
 Կեանք կը վարեմ անուշիկ,
 Ուաղկանց ըուրմունքն անոյշ
 Իմ կերակուրս է միակ :

Բայց իմ կեանքս խիստ կարճ է՝
 Հազիւ օրուան չափ երկար .
 Բարի եղի՛ր, ո՛վ մանկիկ,
 Խնայէ՛ զիս, ձեռք մի՛ տար :



Վ Ա Ր Դ

Զիս ամենքը կը կոչեն
 Ծաղիկներու թագուհի,
 Որովհետեւ իմ ծաղիկս
 Սիրուն գոյն ու հոտ ունի :

Թէեւ կանաչ իմ թուփը
 Շատերու ձեռք կը ծակէ,
 Բայց այս անմեղ յանցանքը
 Ինձ ամեն մարդ կը ներէ :

ԱՌՈՂՁՆ Ո՛Վ Է

Յովսէփ որ մը իր եղբօրը հարցալց . եղբայր, մեր ընկերներուն մէջէն ո՞վ առողջ է :

Եղբայրը պատասխանեց. Առողջը այն է որ ցաւ մը չունի, իւր ձեռքը, գլուխը, ոտքը կրնայ գործածել մեծ դիւրութեամբ. Ետորժակ ունի ուտելու և համ կառնէ, տկար չէ, կրնայ վազել, խաղալ, աշխատիլ, ուրախանալ և զուարճանալ :

Յովսէփ աւելցուց. ազնիւ եղբայրս, ի՞նչ ընելու է որ մարդս առողջ լինի ու մնայ :

Նա ալ պատասխանեց. պէտք է կերակուր ուտել, շարժումներ ընել եւ հանգիստ աւնուլ :

Շարժումներուն ամենէն լաւն է աշխատութիւնը :

Լաւագոյն հանգիստն է քունը :


Բնաւ բարկանալու չէ, պարտաւ մտածումներով միտքը տանջելու չէ :

Շատ խմելու, շատ ուտելու, շատ վազելու չէ :

Վազելէ և տաքնալէ վերջ, ջուր
խմելու չէ:

Քրտնած ատեն վերարկուն հանե-
լու չէ:

Գէշ օդ ծծելու չէ, պաղ առնե-
լու չէ:



Մ Ե Ղ Ո Ւ

Հա՛, ծագեցաւ արեգակը,
Հա՛, ծագկեցաւ մանիշակը,
Մեղուն թողուց իր փեթակը,

Տը՛ւտըզալով, տը՛զտըզալով:

Մեղուն թռաւ ծագկէ ծագիկ,
Մեյր առաւ քաղցր անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ լուսիկ,

Պըսպըսալով, պըսպըսալով:

Անուշ մեղրը՝ մանր տղոց,
Դեղին մոմը՝ ամեն սրբոց:






Ն Ա Պ Ա Ս Տ Ա Կ

Մի՛ վազեր ա՛յսչափ արագ ,
 Ի՛մ աղւորիկ նսպաստակ ,
 Շատ փոքրիկ ես տակաւին ,
 Թաթիկներըդ կը յողնին :

Մի՛, մի՛ այդպէս վեր ցատկեր .
 Սրտիկս թու՛նդ մի հաներ :

Նստէ քովիկս, սիրունիկ ,
 Ուր բացուին բիւր ծաղիկ ,
 Նստէ եւ քեզ հաց բրդեմ ,
 Շաքարեղէն կերցնեմ :

Մինչեւ մեծնաս բաւական ,
 Նապաստակ ի՛մ սիրակսն ,
 Վերջը կերթաս դու պարտեզ ,
 Ոստոստելով լաւապէս :



Յ Ա Փ Ր Ո Ւ Կ

Իմ թուփերըս փարթամ չեն
 Եւ ոչ ծաղիկս փառաւոր .
 Բայց անոյշ հոտըս կ'առնեն
 Ամեն մարդիկ հեռաւոր :

Այս պատճառաւ կրնաք դուք
 Յափրուկ գտնել ամեն տեղ,
 Փունջերու մէջ պարզ անշուք
 Կամ պարտիզաց մէջ շքեղ :





ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ ԵՒ ԱՐՁԸ

Երկու բարեկամ միասին կ'երթային. ճանապարհին անոնց արջ մը պատահեցաւ, որ զիրենք փարատել կ'ապառնար:

Անոնցմէ մէկը տեսնելով արջին գայր, անմիջապէս ծառը ելաւ իւր ընկերոջ իմաց չտալով. իսկ միւսն անմիջապէս յիշելով թէ արջը մեռեալներուն չմնասէր, գետնի վրայ ընկաւ և մեռելի պէս պառկեցաւ իւր շունչը բռնելով:

Արջը մօտեցաւ, բերանը մարդուն բերնին և ականջներուն վրայ դրաւ, և տեսնելով որ շունչ չեղներ, մեռած կարծեց և հեռացաւ:

Այն ատեն ծառին վրայ ելնող ընկերը վար իջնելով հարցուց. բարեկամ, արջն ականջէդ ի՞նչ ըսաւ. ընկերը պատասխանեց. արջը խրատեց զիս որ առանց փորձելու մէկը բարեկամ չը համարիմ ինձի:



Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
 Բուրդըդ սպիտակ ու փափուկ,
 Դաշտ վազելով ու արօտ,
 Մօրդ կը քաշես կարօտ :

Մի՛ լար, գառնուկ սիրական,
 Փոքրիկ տըղու դու նման,
 Կուգայ մայրըդ, հետը շատ
 Կը բերէ բեզ անուշ կաթ :

Փ Ո Ր Ե Ի Ա Ն Դ Ա Մ Ք

Այս քանի մէկ ջանանք յոգնիմք
 Հազար կերպով մե՛նք աշխատինք,
 Ու դու միայն դու անկուշտ փոր
 Կըլլես տանիս քու ճոցդ խոր,
 Մեր պատրաստած կերակուրներն :

Այսպէս ըսին օր մ'անդամներն,
 Չեռք, ոտք, բերան, աչք կ'ըսէին,
 Ամենքս եղեր եմք իւր գերին,
 Իսկ ինքը ծոյլ ծոյլ կը կենայ,
 Մեզի եւ ոչ մաս մը կուտայ .
 Ասկէ վերջն ալ չեմք աշխատիր,
 Դու քու գլխուդ ճարը գտիր :
 Այս ըսելով մէկ բերան,
 Բանէ գործէ ետ կեցան :
 Փորուն խիստ ծով բռնել տուին,
 Բայց ցաւն ընկաւ իրենց վրանին .
 Բոլոր մարմին թառամեցաւ,
 Ո՛չ ձեռք շարժիլ ո՛չ ոտք կրցաւ :
 Երեսներուն գոյնը նետեց,
 Աչքերուն լոյսը կաթկթեց :
 Այն ատեն լաւ մը հասկըցան
 Թէ որչափ փորն էր պիտուան :
 Որ սնունդն նախ ինք քաշելով,
 Վերջն ամենուն ծածուկ ճամբով,
 Կը դարձնէ կուտայ եղեր,
 Չէ թէ անգործ ու ծոյլ նստեր :
 Դուք ալ անդամք էք ժողովուրդք,
 Եւ ստամոքս են վարչութիւնք :



ՃԳՆԱԻՈՐՆ ՈՒ ԱՐՁԸ

Ս. յրի մը մէջ կը բնակէր ճգնաւոր մը, որ ոչ ազգական ունէր և ոչ մերձաւոր. անտառին խորը միս մինակ քաշուած կ'ապրէր և տարիներով մարդու երես չէր տեսած :

Խեղճ ճգնաւորը օր մը այս կեանքէն ձանձրացած՝ կը թողու այրը եւ կ'երթայ մօտակայ անտառին խորը բնակէր մը գտնելու :

Մէկ մ'ալ յանկարծ դէմն արջ մը կ'երևէ. ուստի ճգնաւորն՝ վախէն տարտախելով ողջոյն տամ քեզ, արջ իմ բարեկամ, կը պօռայ, եւ մինչ գետինը կը ծռի, արջն ալ նոյն բանը կ'ընէ եւ բարեւը կ'առնու :

Այսպէս երկուքն ալ նոյն ատեն սիրով իրարու բարեկամ կ'ըլլան եւ կ'երթան լեռներ, ձորեր պարտիլ :

Յայտնի է որ մարդս արջէն տկար է . ուստի մեր ճգնաւորն ալ յոգնեցաւ արջէն առաջ ու սկսաւ ետ մնալ :

Երբ արջը տեսաւ մարդուն յոգ նիլը, եկու քիչ մը պառկէ սա ծառին տակ, եւ ես քեզի պահապան կը կենամ, ըսաւ :

Ճգնաւորն ալ խիստ յոգնած, հընազանդելու ալ վարժուած, երկնցուց ոտքերը ու պառկեցաւ խոտերուն վրայ . արջուկն ալ քովիկը նստաւ . սագիէն անդիէն յանկարծ ճանճ մը եկաւ տըզ տըզալով, եւ ճգնաւորին քթին վրայ կեցաւ :

Արջուկն այս որ տեսաւ՝ աչքերը բանալէն՝ թաթովը մէկդի քշեց որ երթայ . ճանճը թը՛ն ըրաւ փախաւ, ու նորէն թռչելով իջաւ մարդուն քթին վրայ նստաւ . այն ատեն արջը ելաւ, երկու թաթով խոշոր բար մը առաւ,

եւ եկաւ մարդուն քով կամացուկ մը
կեցաւ :

Ըսաւ մօքէն « կեցի՛ր , կեցի՛ր ան-
զգամ , ես քու հախէք հիմա կուզամ : »


Ճանճն որ կարծես կը հակառա-
կէր արջին , տը՛ղ ըրաւ փախաւ եւ
կրկին եկաւ ճգնաւորին ճակատին վը-
րայ նստաւ :

Արջն ալ բոլոր ուժովը շրա՛խ ըրաւ
ձեռքի խոշոր քարովը ճգնաւորին ճա-
կատին զարկաւ , ճանճը սպաննելու
համար :

Ճանճը տը՛ղ ըրաւ փախաւ , ճըգ-
նաւորին ալ հոգին ելաւ :

Մարդիկ կան որ իրենց բարեկամաց
աղէկութիւն ընել կ'ուզեն . բայց իրենց
անխելքութեամբ բարիք ընելու ատեն
չարիք կը հասցնեն :

Պէտք է միշտ զգոյշ լինիլ անխելք
բարեկամներէ , որոնք խելացի թշնամիէ
մը աւելի վտանգաւոր են :





Մ Ո Մ

Գրրպանիս մէջ կայ մի քանի փարայ,
Ի՞նչ ընեմ. ինձ բարի խրատ ո՞վ տայ՝
Գընէ՛ տանձ, խնձոր, յունաբ կամ փշատ
Փող ունեցողին գնելու բան շատ . . .

Չէ՛. ձեր տուածը չէ՛ խրատ բարի,
Ս. յգ կը վայելէ մի շատակերի . . .
Երբ իմ մայրիկս կը տանի զիս ժամ,
Գրպանիս փարան մոմերու կուտամ :

Մոմերն կը վառեմ Սուրբերու գիմաց,
Զոհիս կը հաճի բարեգու թ Սատուած,
Կուտայ ծնողացս Նա առողջութիւն,
Ինձ ալ սէր ու սման և յաջողութիւն :

Տղա՛քներ, շատ շատ վառեցէք մոմեր,
Մոմով կը շինուին մեր շատ դպրոցներ :



ԲԱՐԻ ՏՂԱՅՆ

Սահակ իւր հօրը՝ Յովհաննէսին
ըսաւ. հայրիկ, ես բարի տղուն օրի,
նակին կը հետեւիմ, ես ալ անոր պէս
ամեն առաւօտ եկեղեցի կ'երթամ. ա-
նոր պէս գլուխս կը բանամ և երբեմն
կ'երգեմ դպիրներուն հետ :

Եկեղեցւոյ մէջ ընկերոջս հետ չեմ
խօսիր :

Ձեր գործոց համար յաջողութիւն
կը խնդրեմ Աստուծմէ :

Սուրբ պատարագի աւարտմանէն
յետոյ դուրս կ'ելնեմ եկեղեցիէն, և
մեծերուս ձեռքը կը համբուրեմ :

Ապրիս, տղաս, բարի Սահակս,
պատմէ տեսնեմ անցեալ օր երբ գրեց

Միքայէլի տունը տարի, այնտեղ կերաւ
կուրները ի՞նչպէս կերաւ նա :

— Բարի տղայն սեղանին առջեւը
կայնեցաւ, երեսը խաչակնեքեց և բարձր
ձայնով «Հայր մեր» աղօթքը ըսաւ,
յետոյ նստաւ եւ ինչ կերակուր ո՞ր
պնակը դրին՝ այն կերաւ :

Ապուրը դգալով խմեց, պատառա,
բազով կերակուրները քիչ քիչ բերանը
դրաւ, և ծամելէ ու կլնելէ վերջը «քիչ
մը ջուր շնորհ ըրէք» ըսաւ և ձեռքե-
րը, բերանը թաց ջնջոցով սրբելէ վերջ,
խմեց զայն :

Պտուղները՝ դանակով ստրկելէ յե-
տոյ կերաւ :



ԵՐԵՔ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐ

Ա.Ռ.Ա.ՁԻՆ

Գէորգ մօրը մէկ պատուէրը կա,
տարելու համար աղօրիք կ'երթար :

Ճամբան անօթի և հիւանդոտ ծե-
րունի մը տեսաւ :

Գէորգ ձերունիին թշուառու,

Թիւնը տեսնելով գթաց, և հնարք մը կը փնտռէր մխիթարելու. — «մեղք որ նախաճաշիկիս հացը հատցուցի» կ'ըսէր մտքէն:

Խեղճ ծերունիին բան մը չկարենալ ընելուն վրայ բոլորովին վշտացած՝ յարգական բարեւ մը տուաւ անոր ակնաձուլութեամբ:

— «Աստուած օրհնէ՛ք եզ, տղա՛ս, որ կը պատուես ծերուլթիւնը» ըսաւ հիւանդոտ ծերունին:

Պէտք ճամբան շարունակեց ուրախութեամբ, տեսնելով որ իւր քաղաքավարութիւնը ծերունիին հաճոյք պատճառած էր:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Պէտք էրբ աղօրիք հասաւ, տեսաւ որ հաւ մը մացառի մը տակէն դուրս կ'ելնէր:

Մացառին մօտենալով, տեսաւ որ տերեւներուն տակ ուլթ հաւկիթներ կային:

Իսկոյն Պէտք աղօրիքը մտաւ, ող

ջուներց աղօրեպանուհին, իւր յանձնարարութիւնը կատարելէն վերջ ըսաւ — «Տիկին, հիմա տեսայ որ ձեր հաւերէն մէկը ութ հաւկիթ ածած է սա մացառներէն մէկուն մէջ» :

Գէորգ տարաւ աղօրեպանուհին նոյն մացառին մօտ եւ հաւկիթները ցուցուց. Տիկինը՝ իւր կորսնցնելիք հաւկիթները դանելուն վրայ խիտ գոհփուռէն հանեց կարկանդակ մը, և ունոր տարով ըսաւ .

«Տղա՛ս, ա՛ն այս՝ քու մարդասիրութեանդ փոխարէն» :

Ե Ր Ր Ո Ր Գ

Աղօրեպանուհին տուած կար կանգակը անանկ ազուոր կը հասէր, որ Գէորգ կը փախաքէր անմիջապէս ուտել :

Իայց յանկարծ միտքը եկաւ ճամբան պատահած խեղճ ծերունին եւ սկսաւ մտքէն ըսել. — «Անիկայ մինչեւ հիմա բան մը ճաշած չէ, ո՛րչափ աղէկ կը լինի եթէ այս աղւոր կարկանդակը անոր տամ :

Քայլերը մեծցուց, սկսաւ վազել
որպէս զի անոր հասնի: Քիչ մը վերջը
հիւանդ ծերունիին հասած էր, կար-
կանդակը ձեռքը:

Ծերունիին՝ տղուն բարերարութե-
նէն յուզուած, անոր շնորհակալ լինե-
լու ատեն աչքերը լեցուեցան:

Այսպէս Գեորգ մէկ ժամուան
մէջ, քաղաքավար. մարդասէր և ողոր-
մած լինելու միջոցը գտած էր:



ՏՆԱՅՔ, ՊԷՏՔ Է ԻՐԱՐՈՒ ՕԳՆԷՔ

Մարիամ որ մը իւր գասը պատ-
րաստած ատեն, զբքին մէջ բառերու
պատահեցաւ, որոց արտասանութիւնը

չատ դժուար կ'երեւէր, այնպէս որ քիչ մնաց լար :


Իւր ընկերը, Սաթինիկ, որ անօր պէս դասը կը սերտէր, Մարիամին վիճակը տեսնելով ըսաւ : - « Մտիկ ըրէ՛ ինձ, քոյր իմ, եթէ կ'ուզես, կրնամ դասդ սորվեցնել քեզ, որովհետեւ ես դասս բաւական պատրաստած եմ » :

Եւ երկուքն ալ սկսան իրենց դասը սերտել, և Մարիամի դժուար երեցած բառերը Սաթենիկ կրկին կրկին արտասանելով լաւ մը սորվեցուց անօր :

Սաթինիկ իր ընկերոջ յառաջագիշ մուծեան հօգ տարած ատեն, ինքն ալ շատ յառաջացաւ :

Գաստիարակն՝ այս երկու տղայոց իրենց դասը շուտ եւ աղէկ սովորած ըլլալուն վրայ զարմանալով, դիտեց զանոնք եւ տեսաւ որ երկուքը մէկտեղ դաս կը պատրաստեն իրարու օգնելով : այն ատեն գովեց իր աշակերտաց առջեւ, ըսելով .

— Տղաքս, շարունակեցէք այսպէս եւ գիտցէք որ մարդ մը ուրիշներուն օգնելով իրեն կ'օգնէ :



ԵՐԿՈՒ ԳԻՒՂԱՅԻ ԸՆԿԵՐՆԵՐ

Թագոս ու Մարկոս, երկու գիւղացի ընկերներ, մէկտեղ ճամբայ ելան օտար քաղաք մը երթալու և դրամ շահելու համար:

Քաղաքն իրենց գիւղէն շատ հեռու էր, բայց ճանապարհը շատ կարճ կերեւէր, որովհետեւ շարունակ կը քալէին եւ կարծես չէին յոգներ:

Ի՞նչ լաւ բան է ընկեր ունենալ, ըսաւ մէկը միւսին, առաւօտէ մինչեւ

հիմա շարունակ կը քալեմք եւ կարծես թէ նոր դուրս ելեր եմք :

Ընկերութեան եւ սիրոյ վրայ ինչ որ մին կը խօսէր զմայմամբ, միւս ընկերն աւելի եռանդեամբ կը կրկնէր :

Քիչ մը վերջը անձանօթ գիւղ մը հասան եւ գիւղապետին տունը առաջնորդուեցան՝ գիշերն այնտեղ անցունելու համար :

Գիւղապետը սիրով ընդունեց այս երկու գիւղացիները եւ ուզեց հասկընալ թէ իւր հիւրերը ի՞նչ տեսակ անձինք են :

Ուստի, գաղտնի հարցուց Թադոսին — ընկերդ ո՞վ է, ըս՛ւ մարդ է :

— Մի հարցներ, ըսաւ Թադոս, ի՞չուն մէկն է :

Գիւղապետն զարմանալով Թադոսի պատասխանին վրայ, նոյնպէս գաղտնի հարցուց Մարկոսին թէ՛ ո՞վ է բարեկամ ընկերդ :

— Մի՛ հարցներ, շանը մէկն է :

Գիւղապետը ծանրաբայլ, պատրաստել տուաւ սեղանը, հրամցուց հիւ-

բերը եւ երկու լեցուն պնակ բերաւ .
մին ոսկորով լեցուած՝ Թագոսին և միւ-
սը խոտով լեցուած՝ Մարկոսին առջև
դնելով՝ ըսաւ . հրամեցէ՛ք :

Թագոս ու Մարկոս իրարու երես
նայեցան եւ դարձան գիւղապետին ը-
սին . բեզ վայլե՛ց այսպիսի բան մը
ընել մեզ :

Է՛հ, ինչո՞ւ համար, պատասխանեց
գիւղապետը . իրարու համար ձեր ինձ
տուած վկայութեան համաձայն պատ-
րաստեցի ձեր կերակուրները :

Որչա՛փ մարդիկ կան այս տգէտ
գիւղացւոց նման, որ զիրար պարսա-
ւելով, իրարու գէշ վկայութիւններ
տալով, կը կարծեն թէ իրենք աւելի
մեծ պատիւ մը կ'ստանան օտարներէն :





ՇԱԹԱՐԻ ԿՏՈՐ ՄԸ

Մաթինիկ վեց տարեկան էր եւ շաքարը շատ կը սիրէր:

Օր մը իր մայրը զինքն առաւ եւ պարտելու տարաւ:

Մաթինիկ ձեռքն ունէր փոքրիկ ջամբիւղ մը որոյ մէջ կար շաքարի կտոր մը:

Երբ ճամբէն կ'երթային, տեսան որ կոյր աղքատ մը քարին վրայ նստած էր:

«Մայրիկ, ըսաւ Մաթինիկ, այս խեղճ կոյրին բան մը տալ կ'ուզէի»:

Մայրն, որ հարուստ ու բարետիրտ կին մ'էր, հինգնոց մը առաւ Մաթինիկին որ աղքատին տայ և գոհ լինի:

Աղքատը երբ լսեց Մաթինիկի ոտքին ձայնը որ իրեն կուգար, ըսաւ.

— « Աղջիկս, Աստուած օրհնէ և պահէ դքեզ, որ ինծի պէս խեղճ աղքատին ողորմութիւն կուտաս » :

Սաթիւնիկ իր մօրը քով դարձաւ և անոր հարցոց .

« Ի՞նչ ըսեւ կ'ուզէ այս աղքատը » :

— Աղջիկս, կարծեց թէ իրօք դու ես ողորմութիւն տուողը :

— Ի՞նչ ըսեւ է ողորմութիւն :

— Երբ աղքատին օգնելու համար ունեցածէդ բան մը տաս, ողորմութիւն տուած կը լինիս » :

Սաթիւնիկ մտածելով կ'երթար իւր մօրը հետ, յանկարծ ետ դարձաւ, և աղքատին կողմն վազեց և շաքարին կտորն անոր տալով՝ ըսաւ .

« Բարի մարդ, երբ մեծնամ և ստակ ունենամ, քեզի չ'պիտի տամ, բայց հիմա պզտիկ եմ, մինակ այս շաքարի կտորը ունիմ, այն ալ քեզի կուտամ որովհետև խեղճ ես » :

Աղքատը խնդաց ըթին տակէն, սրտանց աղօթեց որ Աստուած անոր երկար օրեր տայ եւ երջանիկ ընէ :





ԶԱՊԷԼ ԵՒ ՏԱՆ ՄԵՍ ՇՈՒՆԸ

Զապէլ և Եղբարքը իրենց ծնողաց հետ զբօսավայր մը գացած էին, ուր տեղէն կ'անցնէր տարևոր ծառերու մէջէն կլկլացող առուակ մը: Զապէլի հայրն ու մայրն առուակէն հեռու գեղեցիկ մարգագետնին վրայ գորգ մը փռելով նստան և իրենց որդւոց ալ հրաման ըրին որ իրենց մօտ խաղան:

Սքէլ և Լեւոն, Զապէլի եղբայրները, մեծ ու ըրախութեան մէջ էին, բայց չէին ուզեր ոչ իրենց փոքրիկ քոյրն ևս իրենց հետ խաղայ: Զապէլ ալ չէր ուզեր բաժնուիլ անոնցմէ:

Սակայն փոքրիկ աղջիկը երբ տեսաւ որ իրեն եղբայրներն չեն հաճիր որ իրենց հետ խաղայ, ինքն իւր պէպէֆն առաւ եւ ծառի մը տակ նստելով սկսաւ առանձին զբօսնուլ:



Աբէլ եւ Լեւոն գոհ էին որ իրենց քոյրը ծառի մը տակ նստած՝ ինքնին կը զուարճանար և իրենք անհոգ կերպով կը խաղային :

Զապէլ ծարաւած լինելով, կարծեց թէ պէպէ՛հն ալ ջուր կ'ուզէ, ուստի կամաց մը առուակին եզերքը երթալով, ծռեցաւ որ ջուր խմցնէ անոր, բայց ինչ դժբաղդութիւն, այնչափ ծռեցաւ որ ոտքը սահելով առուակին մէջ ինկաւ . իրենց տան մեծ շունը՝ որ փոքրիկ Զապէլէն չէր զատուեր, զայս տեսնելով, ջուրը նետուեցաւ և անոր հանդերձներէն խածնելով եզերքը քաշեց, և սկսաւ հաչել . Զապէլ վախէն մարած, աչքերը չէր բացուեր, իսկ Աբէլ և Լեւոն խաղալէ յողնած՝ ծառին տակ եկան հանդչելու . բայց զարմացմամբ տեսան որ իրենց քոյրը հոն չէր . սկսան փնտռել, և շունին ձայնը լսելով դէպի անոր կողմը վազեցին . տղայոց այս շփոթութենէն ծնողքն ալ իրար անցած՝ անոնց ետեւէն գացին . եւ ի՛նչ

տեսնեն, Զապէլ մարած, ոտքերը ջուրին մէջ, կիսամեռ պառկած էր:

Ամենն ալ տխուր էին. Արէլ եւ Լեւոն իրենց յանցաւոր ըլլալն զգացին եւ զղջային. իսկ հայրը ու մայրը պէտք եղած դարմանն ընելով, իրենց աղջիկը վտանգէն ազատեցին:

Զապէլ այսօր բարի աղջիկ մը եղած, իւր ծնողաց կ'օգնէ, տանը ծառայութիւնները ընելով եւ անոնց հրամանը կատարելով:

Տղայք պէտք է որ իրենց ընկերները կամ եղբարքը առանձին չթողուն, միշտ իրարու հետ սիրով վարուին իրենց ծնողաց հնազանդ ըլլալով:



ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿ ԵՒ ՊՁՏԻԿ ԿԱՏՈՒՆ


Ժամանակաւ պզտիկ աղջիկ մը պարտէզին մէջ նստած էր. պարտէզին գրանը մօտ շատ սիրուն պզտիկ կատու մը կար:

Փոքրիկ աղջիկը պզտիկ կատուն կանչեց «Մինէ, Մինէ, եկու, Մինէ» ըսելով:

Մինէն եկաւ փոքրիկ աղջկան քով, անոր հետ
խաղաց, քծնեցաւ, մռ, մռ, մռ, ընելով:

Փոքրիկ աղջիկը գոհ էր Մինէին հետ խաղալէն
եւ գայն կը շոյէր:

Իրարու բարեկամ էին եւ զիրար կը սիրէին:



Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ի Կ

Մարտն անցաւ, հասաւ Ապրիլ գեղեցիկ
Հեռու աշխարհքէ եկաւ Ծիծեռնիկ,
Բարով դուն եկար, դարնան կարապետ,
Բոյն շինողներուն ամենէն վարպետ:

Կըռունկը թռաւ, գնաց վերեւէն,
Սոխակն ալ փախաւ մեր պարտէզներէն,
Մէկ դու մնացիր ճնճղուկներու հետ,
Սիրուն ծիծեռնիկ, դարնան կարապետ:

Պատուհանիս մօտ շինէ քու բոյնը,
Մնուշ ճռուողով երգէ դարունը,
Աժէ՛ ձու, հանէ՛ գեղեցիկ ձագեր,
Մնացիր մեր մօտ մինչև Սեպտեմբեր:



Բ Ո Յ Ն Ը

Բարձր ծխանի մը վրայ կար թռչուններու բոյն մը, որոյ մէջ ալ չորս պզտիկ հաւկիթներ: Այս փոքրիկ հաւկիթներն բացուեր էին և անոնց մէջէն չորս հատ անփետուր թռչնիկներ ելեր էին:

Բայց մայրը փետուրներ ունէր, եւ թռչնիկներն իր թեւերուն տակը կը տալցունէր:

Եւ երբ մայրը զանոնք կը տալցունէր, հայրը կ'երթար անոնց կերակուր բերելու:

Յետոյ երբ թռչնիկները մեծցան, փետուրնին
քուսաւ, մայրիկն ալ ելաւ հայրիկին օգնելու որ
միասին կերակուր փնտռեն:

Բայց թռչնիկներուն թեւերը դեռ պզտիկ էին.
չէին կրնար թռիլ, անոր համար մայրիկն ըսաւ ա-
նոնց, *բռի, բռի, բռի*, որ ըսել է «Իմ զաւակներս,
իմ փոքրիկ սիրականներս, տունէն մ'ելնէք, այսինքն
ձեր բոյնէն մի հեռանաք»:

Բայց երբոր մայրիկը թռաւ գնաց, թռչնիկ-
ներէն մէկը հնազանդութիւն չըրաւ, բոյնէն դուրս
ելնել ուզեց, մինչև ծայրը հասաւ:

Ա՛խ, անմեղ թռչնիկ, հիմա վար պիտի իյնայ...
ահա կ'իյնայ... ինկաւ ծխանին մէջ և այրեցաւ:

Եւ երբ հայրն ու մայրը ետ դարձան, բոյնին
մէջ մինակ երեք հատ թռչնիկ գտան,

Եւ այս երեք թռչնիկներն սկսան ճվճըվալ,
եւ ըսել կ'ուղէին թէ «Մեր եղբայրը կորաւ, ծխա-
նին մէջ գլորեցաւ»:

Այն ատեն հայր, մայր ու երեք թռչնիկներ
չատ շատ ցաւեցան:

Ինչու որ մէկ զաւակին անհնազանդութիւնը
մոլոր ընտանիքին վիշտ կը պատճառէ:





ՅՈՐԵՆԻ ՀԱՍԿԵՐԸ

Փոքրիկ տղայ մ'էր Օննիկ, երբ իր հօրը հետ
դաշտն էլաւ :

Իր հայրը հողագործ էր և կը նայէր թէ ցորեն-
ները հասունցեր են :

Օննիկ ըսաւ . հայրիկ, տես, ցորենի բուններ կան
որ ծռած են և կան որ չի՛վ չիտակ բարձր կը կե-
նան . կ'երեւի թէ այն բուններն որ չիտակ են՝ լաւ
հասկեր չունին :

Հայրը շուտ մը երկու հասկ կտրեց եւ իր
որդւոյն ըսաւ .

Նայէ . զաւակս, նայէ եւ տես . այս հասկն որ
համեստութեամբ գլուխ կը ծռէր, ցորենի հատիկ-
ներով լեցուն է, և ընդհակառակն այն որ գոռո-
ղութեամբ գլուխը կը բարձրացնէր, բոլորովին պա-
րայ է :

Նոյնպէս անխելք մարդիկ գոռողութեամբ կը
պարծին եւ բարձր երեւնալ կ'ուզեն . իսկ գիտուն
մարդիկ համեստութեամբ կ'զգուշանան պարծենալէ :



ԵՐԿՈՒ ՏԱԿԱՌ

Երկու տակառ

Մէկտեղ ելան ճանապարհ .

Մէկը պարապ

Միւսոյն մէջ լի՝ գինի կար .

Սա անխռով

Ինք իր վրայ գլորուելով :

Առաջ կ'երթար

Լռիկ մնջիկ իւր ճամբով .

Իսկ միւսն ըսես ,

Խելք թռուցած խելի պէս .

Ցատկըտելով

Կը շառաչէր դելի պէս .

Անցնող դարձող

Մե՞ծ կրելով սրտագող ,

Մէկդի քաշուած՝

Հեռուանց էին նկատող :

Բայց ընդունան՝

Զո՛ւր տակառին մեծ էր ձայն ,

Երբոր չէր նա

Միւսին պէս լի՝ պատուական :

Ով իւր բանին վրայ մեծ մեծ կը ջարդէ,
 Յայտնի է որ նորա գլուխ դատարկ է.
 Մարդու պէս մարդ անո՛ր ըսել կը վայելէ
 Որ միշտ սակաւ խօսի եւ բարիք գործէ:



ԱԳՌԱԻՇ ԵՒ ԿՈՒԺԸ

Ագռաւը շատ ծարաւի էր, վազեց կուժի մը քով, որ մէջէն ջուր խմէ.

Իրաւ կուժին մէջ ջուր կար, բայց այնչափ քիչ էր որ շատ աշխատելէ վերջ հազիւ կրցաւ կտուցին ծայրը ջուրին հասցնել:

«Յուսահատելու չէ» ըսաւ ինքն իրեն, հնարք մը կը գտնեմ»:

Ագռաւը մանր քար մը առաւ, կուժին մէջ նետեց, հատ մը եւս, հատ մ'ալ ետեւէն, քարերը ջուրին տակը կ'երթային, իսկ ջուրը վեր կ'ենէր:

Հարկ չեղաւ շատ քար ձգելու, աշխատութիւնը պսակուեցաւ, և հանգիստ սկսաւ խմել ջուրը. թէ որ այս խելքը չընէր, ջուրին հասնելիք չունէր:





ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Յովհաննէս և Գէորգ զիրար շատ կը սիրէին եւ միշտ միասին կը պտըտէին:

Օր մը գեղեցիկ ծառերով զարդարուած պարտէզ մը գնացին, որ նոյնպէս տեսակ տեսակ եւ գոյնգոյն ծաղիկներով զարդարուած էր:

Գէորգ ընկերոջը ըսաւ. Յովհաննէս, տես սա կարմիր վարդն որ գետնի վրայ եղած գեղին, կապոյտ, սպիտակ, թուխ և մանիշակագոյն ծաղիկներուն վրայ հպարտութեամբ կը նայի եւ իր անուշ հոտովը մարդիկ իրեն կը քաշէ:

Է՛հ, պատասխանեց Գէորգ, վարդն իր հոտով եւ տեսքով իրեն կը մօտեցնէ մարդիկ, իսկ սա միջատներն ալ գետնի ծաղիկներուն վրայ թռչտելով եւ բզզալով ըսել կ'ուզեն թէ՛ գետինը զարդարող ծաղիկներն ալ մի՛ մոռնայք:

Տե՛ս, սա ինչ սիրուն կենդանի մ'է, տե՛ս, ինչ գեղեցիկ գոյն ունի եւ կը փայլի ոսկւոյ նման:

Յովհաննէս զայս որ լսեց, սկսաւ մեղուին ետեւէն վազել եւ ուզեց զայն բռնել, բայց ընկերը Գէորգ պոռաց, մի բռներ մեղուն կը խայթէ քեզ:

Մեղուն ծաղկէ ծաղիկ թռչտելէ վերջ յոգնեցաւ և Յովհաննէս մտիկ չընելով ուրախութեամբ բռնեց խեղճ միջատը՝ որ ծաղկանց հիւթը քաղելու եւ մեղր շինելու համար մտած էր պարտէզին մէջ եւ բղբալով, տղտղալով կ'աշխատէր:

Մեղուն ալ Յովհաննէսին ձեռքը խայթեց այնպէս որ լալով վազեց իւր մօր վրայ եւ մայրն անմիջապէս ցեխ դնելով խայթուած տեղը, ձեռքը կապեց եւ հետեւեալ խրատը տուաւ:

Տղաքս, անհնազանդ մի ըլլաք և ձեզ անծանօթ ու և է առարկայէ զգուշացէք:



ԵՐԿՈՒ ԱՅՄԵՐ

Ամայի լերան մը վրայ երկու այծ իրարու դէմ ելան նեղ ճամբու (կապանի) մը վրայ:
Ճանապարհին մէկ կողմը ժայռ էր ահագին


բարձրութեամբ, միւս կողմն ալ խորունկ ու խաւար
անդունդ էր- ճանապարհն ալ այնչափ նեղ էր, որ
ոչ իրարու քովէ կրնային անցնիլ եւ ոչ ալ երեսնին
դարձունել ու ետ երթալ:

Այժերը ի՞նչ ըրին, կը կարծէք:

Մին մեծ զգուշութեամբ պառկեցաւ նեղ ճա-
նապարհին վրայ եւ կռնակը ժայռին կրթնցուց,
միւսն ալ կամացուկ մը անոր վրայէն քալելով անցաւ
անգիլի կողմը:

Պառկող այժն ալ պառկած տեղէն ելաւ կանգ-
նեցաւ ողջ և անվնաս, և ալ կրնար ուզածին պէս
ժայռէ ժայռ ցատկել եւ լեռներու անուշ խոտերը
վայելել:

Տեսա՞ք խոհեմութիւնը որչափ ազէկ բան է:





ԲԱՐԻ ՏՂՈՒՆ

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳԸ

Քանի սիրտս շնորհակալ
Պարտի լինել Արարչէն,
Որ զիս ազատ այս գիշեր ալ
Պահեց բոլոր վտանգէն:

Աստուած բարի տղաքները
Միշտ անդադար կը սիրէ:
Եւ իր անբաւ օրհնութիւնը
Անոնց վրայ կը շրկէ:

Բարի տղայն պարտի սիրել
Իրեն քաղցրիկ ծնողքը,
Եւ շարունակ ի գործ դնել
Անոնց ամեն պատուէրը:

Բարի տղայն պարտի սիրել
 Իր եղբայրը ու քոյրը,
 Բարիք յաւէտ անոնց ընել
 Պիտի լինի իւր իղձը:

Բարի տղայն պարտի սիրել
 Բոլոր իւր ընկերները,
 Միշտ շարունակ զանոնք յարգել
 Պիտի լինի իւր պարտքը:

Բարի տղայն լուռ կը կենայ
 Ի զուր տեղը չի պոռար.
 Իրեն գթոտ ծնողացը
 Նեղութիւն բնաւ չը տար:

Բարի տղայն միշտ կը խորհի
 Սիրել զԱստուած եւ յարգել
 Իր ծնողքն եւ ընկերը,
 Անոնց բարիք միշտ ընել:



Ս Ե Ր Ո Վ Բ Է

Սերովբէ երբ դպրոցէն ելաւ, շատ բան չէր գիտեր: անոր համար մեծ դժուարութիւններ քաշեց իւր առեւտուրի գործերուն մէջ. բայց իւր վեհանձն բնութիւնը ոչ միայն զինքը խիստ հարուստ ըրաւ, այլ եւ մեծ գովեստներու արժանի:

Սերովբէ տասն եւ վեց տարեկան հասակին մէջ դպրոցէն ելնելով գործի մտաւ: Երբ բաւական դրամ չահեցաւ, լաւագոյն համարեց առանձին գործ մը բռնել, ուստի երբ տեսաւ որ իր հայրենեաց մէջ չպիտի կրնայ հարկ եղած գործին ձեռնարկել, ծնողացն հաւանութեամբ ուրիշ երկիր պանդխտեցաւ:

Հեռու քաղաք մը գնաց, կրպակ մը բացաւ, եւ հոն իւր քաղցր, խոհեմ և գործունեայ բնաւորութեամբ յաճախորդներ շահելով, իւր դրամագլուխն աւելցուց և ուրիշ գործի մ'ալ ձեռք զարկաւ:

Այն տեսն գրեց իւր ծնողաց, որ իւր ազգակիցներէն այն որ քիչ շատ դրամ չահած է և կամ ունի, ելնէ իրեն գայ:

Անոնք ալ իւր հօրեղբօր որդին զրկեցին փոքրիկ դրամագլխով մը: Սերովբէ իւր հօրեղբօր որդւոյն յանձնեց իւր հին կրպակն, իրեն ընկեր ընելով, եւ նորա դրամագլխով ալ իր նոր գործն յառաջացուց և հետզհետէ իւր ազգակիցները հրաւիրեց, որպէս զի իրենց ունեցած դրամներն առնուն գան:

Սերովբէ ամենն ալ գործի վարժեցուց եւ իրեն ընկեր ըրաւ, որք մեծապէս շահեցան, բայց ինքն

ամենէն աւելի վաստրկեցաւ, որովհետեւ ամենուն հետ առանձին ընկեր լինելով՝ շահաբաժին կ'առնէր իւրաքանչիւրէն:

Սերովբէ կ'ըսէր ստէպ. Ի՛նչ կը հասկնան այն վաճառականք որոնք իրենց քով միշտ իբր ծառայ կը պահեն աշխատաւոր անձինք՝ հինգ, տասը տարի եւ բնաւ չեն կամիր որ անոնք ալ վաճառականական առանձին ճիւղերու մէջ յառաջանան և այսպէս աշխատաւորներն քաջալերուին. զի հաւատարիմ աշխատողներն, երբ տեսնեն որ իրենց ապագոյն սահմանափակ է, անոնցմէ շատերը գոնէ քիչ հաւատարիմ և քիչ աշխատասէր կ'ըլլան, և այս կը վնասէ նախ վաճառականութեան եւ յետոյ իրենց:



ԱՂՈՒԷՍԻՆ ՈՒ ԱՅԾԸ

Աղուէսին խորամանկութիւնը չգիտցող չկայ, և ամենքն ասոր հաւատացեր են, բայց մինակ այժն է մնացեր չհաւատացող:

Ամառուան մէջ խիստ տաք ատեն՝ երբոր բոլոր

ակերն ու առունները ցամքեր էին, աղուէօին մէկն է զուր չորս կողմ՝ ինկեր խմելու ջուր կը փնտռէր: մինչեւ անգամ՝ ազարակէ մը ներս մտաւ կամացուկ մը, բայց շունը տեսաւ հոն, անոր համար աճապարանօք ձգեց փախաւ անկէ:

Վերջապէս միտքն եկաւ որ ազարակին մօտը դաշտի մը մէջ տեղուանքը հին ջրհոր մը կար, վաղեց հոն գնաց, բայց նայեցաւ որ ջուրը շատ վար էր: Ծառ աշխատեցաւ որ ջուրին հասնի. վերջապէս գլորեցաւ, գլխի վայր ինկաւ ջրհորին մէջ:

Ծառ վախցաւ, բայց շատ չմտառեցաւ, որովհետեւ ջուրը խորունկ չէր և ուղածին պէս աղւոր մը խմեց:

Երբոր ծարանն անցաւ, դուրս ելնել ուղեց, բայց հորին բոլորափէրը պատի պէս շիտակ լինելով, ետեւի ոտքերուն վրայ ելնէր, կայնէր իսկ, դարձեալ կէս ճամբան չէր հասներ հորին բերանը մօտենալու, ուստի և հոն բանտարկեալ մնաց:

Հետեւեալ աւտուն այժ մը եկաւ եւ ջրին մէջ աղուէսը տեսնելով հարցուց՝ «Չուն աղէկ է»:

«Մի հարցունէր» ըսաւ աղուէսը. «ի՞նչ կեցեր ես, վար իջիր. այնչափ աղէկ է որ չեմ կրնար դիմանալ. կը խմեմ ու կը խմեմ, չեմ կշտանար»:

Մէկէն վար նետուեցաւ այժը, բայց վար իջաւ չիջաւ, իսկոյն աղուէսն անոր կունակը ցատկեց եւ շուտ մը դուրս ելաւ. Անգամ մը որ հորին բերանը հասաւ, ետին դարձաւ և ըսաւ. «Ծնորհակալ եմ, մնաս բարով»:

Անմիտ այժը շուտով հասկցաւ որ շատ խենդութիւն ըրեր ու խորամանկ աղուէսին հաւտացեր է:

Մի՛ վստահիք անոնց՝ որոնց խաբեբայ ըլլալը ճանչցուած է:

ՏՂԱՅՆ ԵՒ ՍԱԼՈՐՆԵՐԸ

Մարդուն մէկ տակառ մը լեցուն սալոր գլուխն առած՝ ծախելու կը տանէր. ճամբան քանի մը հատ թափեցաւ գետինն ինկաւ:


Մարդը չտեսաւ թափիլը, և կը քայլէր կ'երթար. բայց տղայ մը տեսաւ սալորներուն թափիլը, և ժողվեց:

« Ինձ նայէ », պռռաց մարդուն, մարդն ալ անոր ձայնը լսելով դարձաւ ետ, և կեցաւ. տղայն ալ սալորներն անոր տուաւ:

Մարդը « Շնորհակալ եմ » ըսաւ, սալորներն առաւ և սակառը գետինը դնելով, հիմա հաւնածդ մէջէն առ » ըսաւ, « որովհետև պարկեշտ տղայ մը ես դուն »:

Երբ մարդն ելաւ գնաց. տղայ մը եկաւ տղուն քով և ըսաւ. « Ինչո՞ւ սալորներուն ամէնն ալ չպահեցիր, հիմա քանի մը հատ ալ ինձ կուտայիր »:

« Ձէ՛, չէ՛ », պատասխանեց տղայն, « եթէ կ'ուզես, այս սալորն ա՛ռ, որովհետև իմն է և կրնամ տալ. եթէ իմն չեղած բանն առնեմ կամ քեզի տամ, գողութիւն ըրած կ'ըլլամ. ուստի չեմ ուզեր որ լաւ անունս կոտորի »:



Ա Մ Ա Ռ

Արսէն, Թորոս, Խաչիկ, Լեւոն, Հարպիկ, Մինաս, Յակոբ և Աստուածատուր դաշտը գնացին որ հնձուած հասկերէն որայ (սէ՛՛՛՛՛) կապեն :

Ամենքն ալ մեծ աշխուժիւ աշխատութեան սկսան, բայց շուտով յոգնեցան եւ քրտնեցան :

Խաչիկ պօռաց. «Ա՛հ, որչափ փաք է ամառը, տես, ինչպէս քրտնեցանք, երանի թէ ամառ չըլլար» :

Ամառ չըլլար, հարցուց Արսէն. այն ատեն ցորեն, դարի, գետնախնձոր, հաճար, վարսակ, և այլն պիտի ունենայինք որով մենք զմեզ և մեր անասունները կերակրէինք. անշուշտ ո՛չ, և եթէ այս տաքութիւնը չլինէր, պիտի կարենայի՞նք այն համեկ

պտուղներն՝ այսինքն գեղձը, ծիրանը, սերկեւիլը, խնձորը, տանձը, սալորը, խաղողը, ձմերուկը, վարունգը, սեխը, կաղինը, շագանակը, ընկոյզը, թուղը նուչը և այլն ժողովել:

Մինաս և Լեւոն՝ որք ուշադրութեամբ մտիկ կ'ընէին, միաբերան գոչեցին: Եղբայր Արսէն, այդչափ պտուղներու անուններն ինչպէս յիշեցիր, երանի թէ հիմա մէկ քանի տեսակ պտուղ ըլլար, ուտէինք ու մոռնայինք տաքն ու տապը:

Լաւ է որ այժմ չունինք, ըսաւ Արսէն. եթէ ունենայինք և այս արեւու սաստիկ ջերմութեան և այս յոգնած վիճակնուս մէջ ուտէինք, անտարակոյս ամենքս ալ կը հիւանդանայինք, ինչպէս որ շատ տղայք և տղայամիտ չափահասներ, ինչպէս ըսաւ հայրս, իրենց ախորժակին գերի կը լինին և գտած պտուղնին կ'ուտեն, առանց նկատելու ժամանակն և իրենց վիճակը, այսպէս պարապ տեղը շատ անգամ կը հիւանդանան և մինչև իսկ կը մեռնին:

Խոհեմ տղայք Արսէնի այս իմաստուն խրատին հաւնեցան և տուն գառնալով իրենց ծնողացը պատմեցին. անոնք ալ գովեցին Արսէնի խելքը, եւ ըսին. — Մեծ մարդ է նա որ իւր տղայութեան ատեն խոհեմութիւնն եւ բարւոյն հետաքրքրութիւնը կը կը փայլեցնէ իրեն վրայ:



Ա Շ ՈՒ Ն

Պարօն Արսէն, եթէ կարելի է, այսօր ալ, ինձ հետ ընկերացիր, ըսաւ Գրիգոր, երթանք պտոյտ մը ընենք դաշտերը, պարտէզները, տեսնենք ի՞նչ կայ:

Շատ լաւ, պատասխանեց Արսէն, բայց Յովհաննէսն ալ միասին առնունք:

Ուրախութեամբ, գոչեց Գրիգոր, Յովհաննէս լաւ տղայ մ'է եւ իմ ալ բարեկամս է. այս ըսելով՝ իրենց ընկեր առին զայն ու դէպի դաշտը ուղեւորեցան:

Յովհաննէս տեսնելով որ դաշտ կ'երթան. Արսէնին դառնալով զարմացմամբ հարցուց. բարեկամ, ո՞ւր կ'երթանք, դաշտը հնձուած ցորենի հասկեր չկան որ որայ կապենք, գոնէ պարտէզ մը երթանք եւ քիչ մը զբօսնունք:

Երկու ընկեր համամտեցան Յովհաննէսին եւ պարտէզ մը դնացին, ուր գետինը ծածկուած տեսան ծառերու դեզնած տերեւներով որ իրենց աչքին լաւ տեսարան մը չէր ընծայեր, եւ ցուրտ մեղմ հով մը մեծ շնկոց հանելով՝ անհամար տերեւներ գետինը կը թափէր:

Ի՞նչ գէշ եղանակ է, գոչեց Յովհաննէս, քիչ մը ցուրտ եւ մեղմ հով մը ծառերն իրենց զարգարանքէն զրկեր է:

Է՛հ, եզրայր Յովհաննէս, դու ալ ցուրտին, տաքին, հովին մէյմէկ պատճառ կը գտնեա՛ միթէ ամառն այսչափ եւ ասկից սաստիկ հով և աշնան սկիզբներն

ասկից աւելի զով չէ՞ր եղած, ինչո՞ւ այն ատեն տե-
րեւները չէին թափեր, արդեօք գիտե՞ս պատճառը,
որովհետեւ ծառերն այն ատեն իրենց պարտքը չէին
կատարած, իրենց պտուղը չէին տուած եւ մենք
դեռ պէտք ունէինք անոնց շուքերուն:

Այն տերեւներն՝ որ պտուղներն արեւու սաս-
տիկ շերմութենէն ծածկելու պաշտօն ունէին, հիմա
լրացուցած են, եւ ծառերն ալ անոնց շուք տալէ
դադրած, ուստի անոնք ևս դեղներով գետին կիյնան
եւ հողը կը պարարտացնեն:

Այսպէս ծառերը կը մերկանան իրենց զարդա-
րանքներէն հանգստանալու եւ գարնան նորէն ծաղ-
կելու համար, ինչպէս մենք կը հանենք մեր հագուստ-
ներն և կը քնանանք վաղը նորէն աշխատելու հա-
մար, իսկ զով հոգի և ծառերու այս վիճակը կ'ի-
մացնեն մեզ թէ ձմեռը մօտ է:

Դաստիարակս ըսաւ թէ այնան երկրագործք
ցորենը կը կասեն եւ ջաղացպանին տանելով ալիւր
կը շինեն. գարին. հաճարը, վարսակը, եգիպտա-
ցորենը, գետնախնձորը շտեմարանները կը լեցունեն
եւ ձմեռուան պաշար կ'ընեն, այդեկութք կը վերջա-
նան, ինչպէս անցեալ կիրակի եղբօրս Ալպրիկի հետ
գնացինք այգիները եւ տեսանք այն զբօսալի աշխա-
տութիւնն եւ կանանց գինի շինելու պատրաստու-
թիւնը:

Եղբայր Արսէն, պատասխանեց Գրիգոր, երանի
թէ այս եղանակին մէջ եւս պտուղներ հասնէին եւ
մենք եւս պարտիզպանէն մի քանի տեսակ ծախու
առնէինք եւ ուտէինք:

Այս եղանակին մէջ ստուգիւ նուռ, զըւար, ձի-
թապտուղ, պիստակ, նարինջ կը հասնին, բայց այս
պարտիզին մէջ այն տեսակ պտղոց ծառերէն չկան,
բայց տունը չորցուցած պտուղներ ունինք. կ'երթանք
կ'ուտենք, պատասխանեց Արսէն, և ամենքն ի միա-
սին, պարտէզէն մեկնեցան, ուրախ զուարթ երգելով:

Որչափ ուրախ կը լինին դաստիարակք, երբ
տեսնեն որ իրենց աշակերտներն իրարու հետ համա-
ձայնութեամբ ուրախ զուարթ կը խաղան, և որչափ
գոհ կ'ըլլան ծնողք, երբ իրենց որդիքը կը տեսնեն
թէ չար տղայոց հետ ընկեր չեն եղած:

Ե Ր Գ Ա Շ Ն Ա Ն

Աշունը եկաւ, թափեցան տերեւք,
Այ մի' փնտուեր դու մանուշակ ու վարդ,
Բնութիւնն ատուր, պարտէզը տրտում,
Չմեռուայ հոգն է մարդոցը սրտում:

Երախան փակուած մինակ սենեկում,
Պատուհանէն պարտէզ է նայում,
Միտքը կը բերէ գարնան օրերը,
Մարգերի վրայ զուարթ խաղերը:

Մի' տրամիր, տղայ, թող անցնի մարտը,
Նորէն կը բացուի նարկիզն ու վարդը,
Նորէն սոխակը պիտի գայ հանդէս,
Նարէն խաղալու դու կերթաս պարտէզ:

Չ Մ Ե Ռ

Օր մը Արսէն, Ալպրիկ, Մինաս, Լեւոն, Յակոբ, Գրիգոր, Խաչիկ, Հարպիկ, Կարապետ, Սարգիս և Յարութիւն իրենց դրացի ընկերներովն ի միասին գացին ու մտաւկայ բլուրին վրայ ելան. անոնց հետ էր նաեւ Աշխէն պէպէտովն:

Օգը շատ ցուրտ էր, ջուրերը սառած էին և գետինը ձիւնով ծածկուած էր, բայց ամենքն ալ ուրախ



էին, որովհետեւ գիտէին թէ Արսէն երբ իրենց հետ էր, լաւ զբօսանք մը պիտի գտնէր:

Արսէն երբ բլուրին վրայ ելաւ, դարձաւ իր ընկերներուն ըսաւ. Տեսէ՛ք, մեր տուններն այս տեղէն կ'երեւին, ուստի եկէ՛ք ձիւնէ պահապան մը շինենք, դաղաններն ալ վախցնենք: Օ՛ն, դուք ձիւն ժողվեցէ՛ք, եղբարք, և ես ալ պէտք եղած ձեւը տամ:

Ամենքն սկսան աշխատիլ մեծ ջանքով և Արսէն կարողացաւ հսկայ մարդու մը կերպարանք տալ, այնպէս որ բոլոր ընկերներն սկսան ուրախութեան աղաղակներ արձակել, եւ անոնցմէ մէկուն առաջարկութեամբ ձեռքը դաւաղան մը տուին, եւ կուրծքին վրայ գրեցին, Ա.Հ.Ս. ԳԻԻՂԻՍ ՊԱՀՍՊԱՆԸ:

Երբ ուրախութեամբ իրենց աշխատութեան արդիւնքը կը դիտէին, մէյ մ'ալ ձիւն սկսաւ գալ, այնպէս սաստիկ, որ ամէնքն սկսան դժգոհիլ:

Սակայն ո՛րչափ մխիթարուեցան, երբ Արսէն նկատել տուաւ իրենց թէ՛ տուններն խիստ մօտ է եւ երջանիկ պէտք է համարուին այն ճանապարհորդէն որ մի շուն ընկեր առած խիստ հեռուէն կուգայ:

Յակորբ, որ ստէպ հարցումներ կ'ընէր Արսէնի, ցուցունելով ճամբորդը, հարցուց խնդալով. եղբայր Արսէն, սա ձմեռն ալ գովէ, տե՛ս, բոլոր երկիրը սպիտակ սաւանով ծածկուած է եւ ճամբորդը ձիւնէն պիտի խզուի:

Է՛հ, ինչո՞ւ չգովեմ, եղբայր, աշնան գետինը ծածկող տերեւներն ո՞վ պիտի փտտեցնէ եւ գարնան գեղեցկութիւնը ո՞վ պիտի պատրաստէ, անշուշտ այս ձիւնը որ մեզ վրաս չունի. գալով ճամբորդին, անշուշտ նա գիտէ թէ ձմեռը կուգայ, հետեւաբար

լաւ մը պատասպարուած է: Իսկ եթէ մենք կը մտնենք,
տաքնալու համար պէտք է կա՛մ խաղանք եւ կա՛մ
վազենք. և եթէ այսպէս չտաքնանք, կրակը շուտով
կը տաքցնէ զձեզ, Յակոբին պատասխանին չսպասե-
ցին ընկերներն, և «ճիշդ է, ճիշդ» պօռալով ամեն-
քը ի միասին վազելով ասուն դարձան, եւ ձիւնը
գաղ-բեղէ վերջն, սահնակ խաղալ սկսան:

Ձ Մ Ե Ռ

Ձը գիտե՛մ ինչո՞ւ ձմեռ ժամանակ
կը յիշե՛մ ես միշտ ընկերքս միակ,
Կըսե՛մ թէ, արդեօք չունի՞ նա կարիք (պէ՛սֆ)
Հաց, միս, եղ ու փայտ ունի՞ նա հերիք:
Ունի՞ տաք հալաւ, ունի՞ նա մուշտակ.
Ամո՞ւր է ասունը, կտուրը չէ՞ ծակ. . .
Ու այսպէս ես միշտ ձմեռ ժամանակ
Միաքս կը բերե՛մ եղբարքս միակ:

Գ Ա Ր Ո Ւ Ն

Մտերը ծաղկիլ սկսած են, թռչնիկները եր-
գել, ծիծեռնիկը եւ արագիլը նորէն կ'երեւին
իրենց բոյներուն մօտ:

Օդը պարզ եւ մաքուր է. մարգագետինն ամ-
բող կանանչ և կարմիր, գեղին, ճերմակ ծաղիկներ
կը զարգարեն գետինը: Ոսկեփայլ մեղուններ բըզ-

զարով ծաղիկներէն մեղր կը քաղեն. իսկ երկրագործը կը հերկէ երկիրը եւ պարտիզպանը պաղատու ծառերու չօր ճիւղերը կը կտրէ, ամառը աւելի արդիւնքը առնելու համար:

Դաստիարակներն եւ ձեր ծնողքը նոյնպէս կ'աշխատին ձեզ համար, որպէս զի օգտակար լինիք եւ պտղատու ծառոց կամ բուրբեր երկրի նման պտուղ տաք:

Որովհետեւ դուք աղայ էք դեռ, ձեր արգի տարիքը ձեր կենաց գարունն է, հիմա կրնանք մշակել ձեր միտքը եւ շատ օգուտ քաղել, երբ աշխատիք պատրաստել ձեր դասերը:



Կարօտ ենք տեսիլդ, տներման գարուն,
Շո՛ւա, արի, մեզի բե՛ր ծաղիկ սիրուն.

Բե՛ր պայծառ արեւ, բե՛ր մեզ տաք օրեր,
Ճըռւտօզ սթաշուն, բե՛ր կանանչ դաշտեր:

Բա՛ց մեր գօներն, բա՛ց մեր պատուհան,
Թո՛ղ բացուին ծաղկին մեխակ եւ շուշան.

Մեր փակուած տունէն ելնենք պտըտինք,
Կանանչ դաշտ երթանք, խաղանք գլորուինք:





Ա Ր Ե Ի

Ժրագլուխ գիւղացին Մարիամ իւր զաւակներով կը վերադառնար արտէն, ուր անոնց հետ աշխատած էր ամբողջ օրը :

Մութ էր, տուն հասան և շատ զարմացան, երբ սենեկին մէջ գտնուած կանթեղը վառուած տեսան .

Տղաքներն ապշած իրարու երես նայեցան եւ անոնցմէ մին, Սահակ, պօռաց .

Այս ի՛նչ է, տունը մարդ չ'կար, ո՞վ վառեց այս կանթեղը :

Եղբայրն պատասխանեց, Հայրիկնիս վառած լինելու է :

Ո՛չ ըսաւ Սահակ, Հայրիկնիս գեռ արտն էր, երբ մենք ճամբայ ելանք :

Մայրերնին տեսնելով զաւակաց շփոթութիւնը, ըսաւ, Տղաքս, կ'երեւի թէ ձեր հայրը շուտաքայլ եկած և մեզմէ առաջ տուն հասնելով, կանթեղը վառած է. վեր ելէ՛ք, տեսէ՛ք, թերեւս ինքն ալ սենեկին մէջ նստած է:

Սահակ և Յակոբ երկու եղբայր վեր վազեցին և տեսան թէ հայրերնին նստած էր սենեկին մէջ:

Յակոբ ուրախութեամբ պատմեց իր հօրը թէ՛ ի՛նչպէս զարմացեր էին կանթեղին վառուած լինելը տեսնելով, և որչափ շփոթած պիտի մնային, երբ մայրերնին չըսէր թէ՛ հայրերնիդ արգէն շուտաքայլ դարձած և վառած է զայն:

Հայրն ըսաւ. տղաքս, երբ դուք ևս լաւ մտածել սովորեք, այն ատեն ամեն բանի պատճառը շուտով կրնաք գիտնալ:

Երկրորդ օրը հայրն, մայրը և տղայքն դաշտը գացին հնձուած ու չորցած խոտերը դիզելու: Արեւը երկնից կամարին վրայ կը փայլէր եւ տղայք ուրախ զուարթ կ'աշխատէին:

Որդեակ իմ, ըսաւ հայրերնին, երէկ կարող եղաք համոզուիլ կամ՝ գտնել թէ՛ ես էի սենեկին մէջ դրուած կանթեղը վառողն: Արդ կրնա՞ք գիտնալ թէ ո՞վ է մեր վրայ ծագած լոյսը վառողը:

Այո, պատասխանեց Յակոբ, քիչ մը մտածելէ վերջ. Աստուած է զայն վառողը, փոքրիկ կանթեղ մը ինքնին չվառիր, ուր մնաց պայծառ արեւը, ուրեմն այն ալ վառող մը ունի որ է Աստուած:

Ճշմարիտ է, հայրիկ, աւելցուց Սահակ. ամեն

բանի արարիչն Աստուած է. զոր օրինակ Արեւը, Լուսինը, աստղերը, խոտերը, ծաղիկներն, ծառերը, մէկ խօսքով, ինչ որ կը տեսնենք եւ չենք տեսներ Աստուծոյ արարածներն են:

Ապրիք, աղաքներս, ուրախ եմ որ լաւ կը խորհիք և կը ճանչնաք թէ Աստուած է ամեն բանի արարիչը: Ուստի պէտք է միշտ շնորհակալ լինինք իրեն եւ օրհնենք զինքն. աղօթենք որ մեր աշխատութիւններն արդիւնաւոր ընէ, գիտէք եւ կը տեսնէք թէ մենք ցորեն, գարի, վարսակ կը ցանենք, բայց չենք կրնար բուսցունել. այսպէս ալ մարդիկ շատ բաներ կը շինեն, բայց չեն կրնար ճանճ մը անգամ ստեղծել:





Մ Ա Յ Ր Ի Կ Ս

Ո՞վ կերակրեց զիս՝ տալով ծիծ անուշ,
 Ո՞վ առաւ իւր գիրկն որ ննջեմ մուշ մուշ,
 Իմ վարդ երեսիս ծաղիկներ թափեց .

Մայրիկս :

Երբ իմ աչերէս փախաւ քուն գնաց,
 Ո՞վ ինձ անուշիկ օրօրներ ասաց,
 Եւ թեւերուն մէջ օրեց որ չըլամ :

Մայրիկս :

Ո՞վ նստաւ հսկեց իմ մատաղ գլխուն,
 Երբ մէջ որբանիս ննջէի սիրուն,
 Եւ սիրոյ քաղցրիկ արտասուք թափեց .

Մայրիկս

Երբ կծու ցաւով կուլայի ես միշտ,
 Ո՞վ իմ աչք սրբեց, թեթեւցուց իմ վիշտ,
 Ահ ու դող զգաց որ ես չմեռնիմ,

Մայրիկս :

Ո՞վ վազեց օգնել, երբ ես ինկայ վար,
 Եւ պատմեց ինձ վէպ որ լինի ինձ ճար,
 Պագաւ ցաւած տեղն որ տանի դարման .

Մայրիկս :

Ո՛վ աղօթք ուսոյց իմ բերնիս քնքուշ,
Որ պաշտեմ զՍատուած լինիմ միշտ զգոյշ,
Եւ խելքով շնորհքով իմ կեանք անցունեմ,

Մայրիկս:

Եւ կրնա՞մ երբէք մոռնալ քեզ, հոգիս,
Դու որ սիրեցիր եւ հոգացիր զիս,
Եւ այնչափ ցաւեր առ ոչինչ դրիր:

Մայրիկս

Ո՛հ այդպիսի բան մտքէս չը անցնիր,
Եւ դու ո՛ր Սատուած իմ արեւ պահիր,
Յուսամ վարձատրել քու անբաւ հոգեր:

Մայրիկս:

Իսկ երբ դառնաս դու, տկար, պառաւուկ,
Իմ հզօր բազուկ քեզ լինի նեցուկ,
Եւ պիտի սիրփեմ բոլոր քու ցաւեր:

Մայրիկս:

Եւ երբոր տեսնեմ որ գլուխդ ծռի,
Ես պիտի հսկեմ մօտ քո սնարի՝
Եւ սրտիս խորէն պիտ' արցունք թափեմ:

Մայրիկս:



Ա Ռ Ա Մ Ն Ե Ր

Մուշութիւնն ու անգործութիւնն աղքատութեան դուռներն են :

Մարդս չգիտցածը հարցունելու պէտք չէ ամաչէ :
Գէշ վերքը կ'առողջանայ, գէշ համբաւը չը շրտկուիր :

Ամեն տեսակ վէճ և կռիւ վաղուան թո՛ղ, եւ շահով կ'ազատիս :

Ուրիշներուն ամեն բան ներէ, իսկ քեզ՝ և ոչ մի բան :

Ուրիշներուն քաշածը դիտէ, քննէ, և քեզ թեթեւ կ'երեւնայ քու կինդ :

Տգիտութիւնը ամօթ չէ . տղէտ մնալն է ամօթ .
գիրքդ կարգա՛, ուսիր և տղէտ չես մնար :

Չար ընկերներ սիրողն ինքն ալ չար կը լինի :

Բարի ընկեր մը մարդուս մեծ գանձ է :

Բարի անունը շատ անգամ մարդս նեղութիւններէ կ'ազատէ :

Գէշ խօսքերը սուր գանակէն աւելի սիրտ կը ցաւցունեն :

Համբերութիւնն անանկ ծառ մ'է որուն արմատը թէպէտ լեղի բայց պտուղը շատ քաղցր է :

Ով որ քիչով գոհ կը լինի, նա երջանիկ կը համարուի :

Հարուստ է այն մարդն, որ աղէկ բարեկամներ ունի :

İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



ERM0486

255.07.02.01.06.00/

Մ Ա Ր Գ Ա Ր Ե Ա Ն Գ Ր Ա Տ ՈՒ Ն

Կ. ՊՕԼԻՍ ՄԵՐՁԱՆ ՓՈՂՈՅ ՓԻՒ 57

Գ Ա Ս Ա Կ Ա Ն Գ Ր Ա Ս Ն Ե

ՄԱՆԿԱՆՅ ԳԻՐՔԸ կամ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ ՔԵՐԱԿԱՆ բոլորովին նոր սեռով սպազրեալ բազմաթիւ անգամ, 80 ի չափ փոքրադիր պատկերներով զարդարեալ: Փորձով հաստատուած է թէ ասկից լաւ եւ խիստ դիւրուսոյց ֆերալան մը ցարդ չէ հրատարակուած: զինք չափազանց անան՝ հասք 5 փարայ 100ը 12 դրո:

ՄԱՐԳՐԻՏՆԵՐ Մանկապարտեզի ծաղկոցի մանուկներուն համար, կ'ուսուցանէ 12 օրինակեղի բառերով կարգալ, գրել, եւ կր'ըմբռնակէ երգեր, խաղեր, առակներ, հանելուկներ, 14րո:

ՄԻՐՈՒՆ ԶԲՅԱՐԱՆ Մանկապարտեզի զինք, կը պարտենան մանկական երգեր, կարն հասուածներ, առակներ, բարոյալից փառքիկ պատմութիւններ եւ անուածներ, զին 2 դրո:

ՈՍԿԵՄԱՏԵՆԻԿ Հայ տղայոց, երրորդ զինք ընդերցանութան Գ. Տպագրութիւն նոխացեալ եւ 120 պատկերով զարդարեալ, կը բովանդակէ բարոյական գեղեցիկ պատմութիւններ, ոսանաւորներ, երգեր, առակներ եւ անհավարտուր գիտելիքներ եւայն: Սոյն զինքը գնահատուած է ծանօթ մանկավարժներէ եւ ամեն տարի արժանացո՞ծ է նոր տպագրութան, համապատասխան իւր անուան եւ պիտան: ամեն Հայ տղայոց, զին 4 դրու:

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ կամ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԱՆԵՆ ԳԱՍԵՐ պատկերազարդ. Մասն Ա. իր տեսիլին մեջ անցնման:

ԳԵՂԵՅԻԿ ԶԲՅԱՐԱՆ Տանկապարտեզի տղայոց, կամ վարժութիւն Հայ խօսակցութեան եւ ընթերցման Ա. Տարի: Փորձով հաստատուած է թէ մի տարւոյ մեջ Տանկապարտեզի տղայ կը կարգանա կը խօսին Հայերեն. զինն 100 փարայ:

ՍԲԵՐԱԶԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ Ն Պատկերազարդ 2. տղայ. 100 փար:

ՄԱՆԿԱՆՅԱՐՁՈՒԹԻՒՆ ԲԺՇԿԱԿԱՆ Արանց, կանանց եւ փոքր տղայոց զարդարեալ 45 պատկերով. զին 5 դրու:

ԸՆՏԱՆԵՆ Ն ՆԱՄԱԿԱՆԻ Փոքր տղայոց. զին 3 դրու:

معرف نظارت جليله سنك رخصتيله طبع اولمشدر.